**<<ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ>> ՍՊԸ**
ՀՀ ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փող. 7
E-mail: ecobuilding86@mail.ru, ecobuilding17@gmail.com
Հեռ. +/374/93-83-88-22

N - 2 /24

29. 02. 2024 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ
համայնքի ղեկավար
պարոն Ջասմ Մախմուդովին

Հարգելի պարոն Մախմուդով

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով <<ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրի վարչական տարածքում իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզ, Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրում 144 տեղ/հզորությամբ կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

Հայտնում եմ, որ Ռյա Թազա բնակավայրում գոյություն ունեցող Արմինե Ավդալի անվան դպրոցը գտնվում է անմիջապես կից գերեզմանոցին և նույն տարածքում նոր կրթահամալիրի կառուցում հնարավոր չէ, քանի որ չի պաշտպանվում սանիտարապաշտպանիչ գոտին:

Նախատեսվող կրթահամալիրի տեղադիրքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կներկայացվի համայնքին, ներկայումս իրականացվում են տեղանքի ընտրության աշխատանքներ:

Խնդրում եմ Ձեր լիազորությունների և իրավասությունների շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով /ծանուցումը ստանալուց հետո ոչ շուտ 21 աշխատանքային օրվա և ոչ ուշ քան 25 աշխատանքային օրվա ընթացքում/ կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումներ՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ալագյազ

համայնքի Ռյա Թազա բնակավայրում 144 տեղ/հզորությամբ կրթահամալիրի կառուցման աշխատանքների

շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում եմ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ /խմբագրված 2023թ/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի /խմբ. 28.12.2023թ թիվ 2343-Ն որոշում/ հանրային քննարկումների իրականացումից հետո ընկերությանը տրամադրել արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն կամ նկարներ և նախնական համաձայնություն՝ ավագանու որոշմամբ, կրթահամալիրի կառուցման աշխատանքներ վերաբերյալ:

Հանրային քննարկումների օրի, վայրի և ժամի վերաբերյալ խնդրում եմ լրացուցիչ տեղեկացնել ընկերությանը:

Խնդրում եմ վերը նշված Օրենքի և ՀՀ կառավարության որոշման դրույթների համաձայն ապահովել նաև շահագրգիռ հանրության մասնակցությունը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ տնօրեն Կ. Մինասյան